

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2018թ., թիվ 7

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, 2018 թվականի սեպտեմբերի 25-ի Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի թիվ 5 արձանագրությունը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի՝ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի կողմից հատուցման գումարների վճարման կարգը հաստատելու վերաբերյալ» թիվ 9 որոշմամբ հաստատված և 2018 թվականի հունիսի 14-ի՝ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 9 որոշմամբ հաստատված կարգում փոփոխություն և լրացումներ կատարելու վերաբերյալ» որոշմամբ լրացված «Հատուցման գումարների վճարման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 9-րդ կետի 3-րդ մասը՝ «անդամահատված ծայրատներ», լրացնել հետևյալ բովանդակությամբ.

- « – Զույգ սրունքների ամպուտացիոն ծայրատ,
- Սրունքի ամպուտացիոն ծայրատ՝ համակցված դաստակի կամ նախաբազկի ամպուտացիոն ծայրատի հետ,
 - Ազդրի կարճ (Ցամ) ծայրատ կամ էկզարտիկուլյացիա,
 - Պրոթեզավորման ոչ ենթակա ազդրի ամպուտացիոն ծայրատ,
 - Զույգ ազդրերի ամպուտացիոն ծայրատ վերին 1/3-ի սահմանում,
 - Վերին վերջույթի և ազդրի ամպուտացիոն ծայրատներ,
 - Ստորին վերջույթի ամպուտացիոն ծայրատ՝ համակցված մեկ աչքի կուրության հետ,
 - Զույգ դաստակների մատների բացակայություն,
 - Զույգ վերին վերջույթների ամպուտացիոն ծայրատներ,
 - Վերին վերջույթի ամպուտացիոն ծայրատ՝ զուգակցված մեկ աչքի կուրության հետ » :

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնում ընդունման օրվանից:

**Զինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝**

Դավիթ Տոնոյան